ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

30.09.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/6 գնման պայմանագրի

ք. Երևան 13.12.2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Պ. Դանիելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.11.2021թ. N 1898-Ն որոշումը ՀՀ Գեղարքունիքի մարզի <<Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքերի կառուցման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 30.09.2021թ. կնքված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/6 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

1.1.2 Պայմանագիրը լրացնել նոր N 3 հավելվածով՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 2-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելված N 1-ը բաղկացած է 2 (երկու) էջից, հավելված N 2-ը՝ 1 (մեկ) էջից, որոնք համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011038792 ՀՎՀՀ 02565827	<<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ ՀՀ, ք. Երևան Ավան Դուրյան 35շ. 40 բն. <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ Հ/Հ 11500548625986 ՀՎՀՀ 08617407
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան (ստորագրություն)	_____ Պ. Դանիելյան (ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
30.09.2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/6 պայմանագրի
13. 12 .2021 թ. կնքված N 1 համաձայնագրի

<<Հավելված N 2
30.09.2021թ.կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/6 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի ՆՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքները	Աշխատանքների կատարման ժամկետը
1	Գոյություն ունեցող շինությունների ապամոնտաժման աշխատանքներ	ոչ ուշ քան 60-րդ օրացուցային օրը
2	Շին. հրապարակի և անվտանգ գոտիների կազմակերպման և հողային աշխատանքներ	ոչ ուշ քան 80-րդ օրացուցային օրը
3	Հիմքերի իրականացման աշխատանքներ	ոչ ուշ քան 120-րդ օրացուցային օրը
4	Ստորգետնյա հարկերի կառուցման աշխատանքներ	ոչ ուշ քան 120-րդ օրացուցային օրը
5	Արտաքին ինժեներական գծերի իրականացման աշխատանքներ	ոչ ուշ քան 210-րդ օրացուցային օրը
6	Շենքի վերգետնյա կրող տարածական կոնստրուկցիաների կառուցման աշխատանքներ	ոչ ուշ քան 600-րդ օրացուցային օրը
7	Տանիքի անջրանցիկ շերտերի պատրաստման աշխատանքներ	ոչ ուշ քան 690-րդ օրացուցային օրը
8	Պարփակող պատերի շարման աշխատանքներ	ոչ ուշ քան 660-րդ օրացուցային օրը
9	Միջնորմների իրականացման աշխատանքներ	ոչ ուշ քան 660-րդ օրացուցային օրը
10	Վերելակների և ավտոմատիկայի տեղադրում	ոչ ուշ քան 680-րդ օրացուցային օրը
11	Շինության արտաքին հարդարման աշխատանքներ	ոչ ուշ քան 690-րդ օրացուցային օրը
12	Ներքին ինժեներական գծերի իրականացման աշխատանքներ	ոչ ուշ քան 720-րդ օրացուցային օրը
13	Լուսամուտների և դռների տեղադրման աշխատանքներ	ոչ ուշ քան 705-րդ օրացուցային օրը
14	Ինժ. գծերի և ավտոմատիկայի փորձարկում	ոչ ուշ քան 735-րդ օրացուցային օրը
15	Ներքին հարդարման աշխատանքներ	ոչ ուշ քան 750-րդ օրացուցային օրը

16	Շինարարական աղբի հեռացման և բակային կառուցապատման աշխատանքներ	ոչ ուշ քան 795-րդ օրացուցային օրը
17	Տարածքի կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ	ոչ ուշ քան 780-րդ օրացուցային օրը
18	Ավարտական փաստաթղթի և շահագործման ակտի ձեռքբերում	ոչ ուշ քան 810-րդ օրացուցային օրը
	Ընդամենը	**810 օրացուցային օր**

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**

ՀՀ Գեղարքունիքի մարզի <<Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքերի կառուցման 2021 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցով նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում կատարվելիք աշխատանքների

N	Գումարը ՀՀ դրամով	Կատարվելիք աշխատանքների ներկայացման վերջնաժամկետը
1	56 166 700	ոչ ուշ քան 70 օրացուցային օր
Ընդամենը	**56 166 700**	**70 օրացուցային օր**

* **Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությանն առնչվող բոլոր փոփոխություններն անհրաժեշտ է նախօրոք համաձայնեցնել Պատվիրատուի հետ:**

** **Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են շինարարական աշխատանքների կատարման, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրերից (համաձայնագրերից) վերջինի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրը:>>:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 90001038792
ԿՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

<<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան Ավան Դուրյան 35շ. 40 բն.
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500548625986
ՀՎՀՀ 08617407

Տնօրեն՝

_____ Պ. Դանիելյան
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2
30.09.2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/6 պայմանագրի
13.12.2021 թ. կնքված N 1 համաձայնագրի

<<Հավելված N 3
30.09.2021թ.կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/6 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221142/519	ՀՀ Գեղարքունիքի մարզի <<Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքերի կառուցման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	56 166 700	56 166 700

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:>>:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011038792
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

Ա. Գլուտչյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

<<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան Ավան Դուրյան 35շ. 40 բն.
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500548625986
ՀՎՀՀ 08617407

Տնօրեն՝

Պ. Դանիելյան
(ստորագրություն)

Կ.Տ

N 7852-02
«09» 12 20 21

ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ԱՐՍԵԿ» ՍՊԸ միջև կնքվելիք N «ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-21/6» պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 5,616,670 (հինգ միլիոն վեց հարյուր տասնվեց հազար վեց հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքվելիք N «ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-21/6» պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ամբողջական կատարման օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը՝ բայց ոչ ուշ քան 30.07.2025թ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N «ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-21/6» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահ Ա. Սարգսյան

Գլխավոր հաշվապահ Ն. Սարգսյան

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
"ARMBUSINESSBANK" CJSC

N 7853-02
«09» 12 2021

ԵՐԱՇԽԻՔ
(որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/6 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԱՐՍԵԿ» ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/6 պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 16,850,010 (տասնվեց միլիոն ութ հարյուր հիսուն հազար տասը) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/6 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ամբողջական կատարման օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը՝, բայց ոչ ուշ քան 30.07.2024թ.: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/6 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահ՝ Ա. Սարգսյան

Գլխավոր հաշվապահ՝ Ն. Սարգսյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48; Հեռախոս՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Էլ. փոստ՝ info@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Налбандян 48, 0010, Ереван, РА; Телефон: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл. почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 48 Nalbandyan, 0010, Yerevan, Armenia; Telephone (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; E-mail: info@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am